# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

**<<ՉՔ-ՄՁՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-17/1>> ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի**

**ք. Չարենցավան** _09_ _դեկտեմբերի_ _2016թ._

ժամը _10[00]_

**Մասնակցությամբ՝**

Հանձնաժողովի նախագահ՝ **Գ. Աբրահամյան**

Հանձնաժողովի անդամներ՝ **Վ. Սարգսյան, Խ. Գևորգյան**

Հանձնաժողովի քարտուղար՝ **Շ. Հարությունյան**

**1. Տեղեկատվություն գնման առարկայի յուրաքանչյուր չափաբաժնի ընդհանուր նախահաշվային գնի և հայտեր ներկայացրած մասնակիցների մասին**
**(Գ. Աբրահամյան)**

1.1 Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 44-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման առարկայի յուրաքանչյուր չափաբաժնի ընդհանուր նախահաշվային գինը՝ մեկ թվով արտահայտված.

| Չ/հ | Ապրանքի անվանումը | Ապրանքի ընդհանուր նախահաշվային գինը՝ մեկ թվով արտահայտված (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | Բենզին, ռեգուլյար | 280000 |
| 2 | Դիզելային վառելիք | 2816000 |

1.2 Ընդունել ի գիտություն, որ սահմանված ժամկետում հայտեր են ներկայացրել <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի հետ շրջանակային համաձայնագրեր կնքած հետևյալ մասնակիցները.

| Հ/հ | Մասնակիցների | | |
|---|---|---|---|
| | Անվանումը | Գտնվելու վայրը (հասցեն) | Կապի միջոցները |
| 1 | <<Մաքսհուր>> ՍՊԸ | ք. Երևան, Տպագրիչների 8 | Էլ. հասցեն՝ maxhur.tender@mail.ru Հեռ. 010-52-67-51 |
| 2 | <<ՖԼԵՇ>> ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, Ե. Կողբացու 30 | Էլ. հասցեն՝ flash@flashltd.am Հեռ. 010-53-42-33 |

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

**2. Տեղեկատվություն հայտեր պարունակող ծրարների կազմման և ներկայացման համապատասխանության մասին**
**(Գ. Աբրահամյան)**

2.1 <<Մաքսհուր>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտ պարունակող ծրարը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին անհամապատասխան, մասնավորապես՝ <<Մաքսհուր>> ՍՊԸ-ի անունից՝ շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտ պարունակող ծրարը Պատվիրատուին ներկայացվել է <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի և <<ՉՔ-ՄՁՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-17/1>> ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի 2-րդ մասի (շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգ) 5.2 կետի պահանջների խախտմամբ՝ ծրարի վրա <<չբացել մինչև հայտերի բացման նիստը>> բառերի փոխարեն նշված է եղել <<չբացել մինչև գնային առաջարկների բացման նիստը>> բառերը: Հանձնաժողովի որոշմամբ <<Մաքսհուր>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը

մերժվել է և նույնությամբ վերադարձվել Մասնակցին: Վերը նշվածի վերաբերյալ կազմվել է համապատասխան արձանագրություն (կցվում է):

2.2 <<ՖԼԵՇ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտ պարունակող ծրարը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

### 3. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի (հայտում առկա փաստաթղթերի)՝ հրավերի պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին (Գ. Աբրահամյան)

3.1 <<ՖԼԵՇ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը (հայտում ներառված փաստաթղթերը) կազմված են հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

### 4. Տվյալներ մասնակիցների կողմից ներկայացրած գնային առաջարկների մասին (Գ. Աբրահամյան)

4.1 Մասնակիցների կողմից առաջարկված գնային առաջարկները ներկայացված են ստորև.

| Հ/հ | Մասնակիցների անվանումները | Մասնակիցների կողմից առաջարկված գները, ընդ որում՝ | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | Ինքնարժեք | Շահույթ | Առաջարկված գինը (առանց ԱԱՀ-ի) | ԱԱՀ | Առաջարկված ընդհանուր գինը |
| Չափաբաժին N 1-բենզին, ռեգուլյար | | | | | | |
| 1 | <<ՖԼԵՇ>> ՍՊԸ | 203700 | 6300 | 210000 | 42000 | 252000 (ԵՍՄ) |
| Չափաբաժին N 2-դիզելային վառելիք | | | | | | |
| 1 | <<ՖԼԵՇ>> ՍՊԸ | 2475440 | 76560 | 2552000 | 0 | 2552000 (ԵՍՄ) |

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

### 5. Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների մասին (Գ. Աբրահամյան)

5.1 Մասնակիցների զբաղեցրած տեղերի մասին տվյալները ներկայացված են ստորև.

| Մասնակիցների զբաղեցրած տեղերը | Մասնակիցների անվանումները | Մասնակիցների կողմից առաջարկված գները, ընդ որում՝ | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | Ինքնարժեք | Շահույթ | Առաջարկված գինը (առանց ԱԱՀ-ի) | ԱԱՀ | Առաջարկված ընդհանուր գինը |
| Չափաբաժին N 1-բենզին, ռեգուլյար | | | | | | |
| 1 | <<ՖԼԵՇ>> ՍՊԸ | 203700 | 6300 | 210000 | 42000 | 252000 (ԵՍՄ) |
| Չափաբաժին N 2-դիզելային վառելիք | | | | | | |
| 1 | <<ՖԼԵՇ>> ՍՊԸ | 2475440 | 76560 | 2552000 | 0 | 2552000 (ԵՍՄ) |

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

### 6. Գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից կատարվելիք գործողությունների մասին (Գ. Աբրահամյան)

6.1 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան՝

ա) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերի 2.3 կետի <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ.

բ) Ծանուցել առաջին տեղ զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2016 թվականի դեկտեմբերի 15-ը ներառյալ, ներկայացնել հրավերի 2-րդ մասի՝ հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը.

գ) 6.1 կետի բ) ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

| | | |
|---|---|---|
| **Հանձնաժողովի նախագահ՝** | ______________ (ստորագրությունը) | **Գ. Աբրահամյան** |
| **Հանձնաժողովի անդամներ՝** | ______________ (ստորագրությունը) | **Վ. Սարգսյան** |
| | ______________ (ստորագրությունը) | **Խ. Գևորգյան** |
| **Հանձնաժողովի քարտուղար՝** | ______________ (ստորագրությունը) | **Շ. Հարությունյան** |